ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան, Նալբանդյան 104

«18» 06 2020թ. N 20/464

Ա/Ձ «Արթուր Պողոսյան»

Ա. Պողոսյանին

ՀՀ Երևան, Ն. Տիգրանյան 27

Էլ. հասցե՝ autoworld18@mail.ru

ՀՎՀՀ 26537712

Համաձայն ՀՀ ազգային անվտանգության ծառայության և «Արթուր Պողոսյան» Ա/Ձ-ի միջև 17.02.2020թ. կնքված ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-20/1-Ա/ՄԱՍԵՐ3/1 (11/123-2020) պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) և դրա հիման վրա 25.03.2020թ. կնքված N 1 (11/272-2020) համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ 2019-2020թթ ընթացքում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում ընկերությունը պարտավորվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար մինչև 30.04.2020թ. մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրի-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքները՝ (N 65 չափաբաժնով՝ 39000 (երեսունինը հազար) ՀՀ դրամ ընդհանուր գումարի 30 հատ ավտոմեքենաների պահեստամասեր), սակայն մինչ օրս չի մատակարարվել և 08.06.2020թ. N 2 գրությամբ «Արթուր Պողոսյան» Ա/Ձ-ն հրաժարվում է մատակարարել վերոհիշյալ ապրանքները:

Համաձայն Պայմանագրի 2.1.7.-րդ կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարն էականորեն խախտել է

Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի 2.1.7-րդ կետի՝ «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Հիմք ընդունելով վերոնշյալ Պայմանագրի 2.1.7.1. կետի «բ» ենթակետը և Պայմանագրի 8.9 կետը՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը և համաձայնագիրը:

Միաժամանակ տեղեակացնում ենք, որ «Արթուր Պողոսյան» Ա/Ձ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի համաձայնագրեր՝ Հավելված N 4.1 և Հավելված N 5.1) ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին փոխանցել 42900 (քառասուներկու հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, որպես տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումար:

Ա. Հակոբյան

Հեռ. (015) 579-487